ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

10.07.2020թ N 06/11.2/15082-2020

ԱԼԱՎԵՐԴՈՒ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒՄ
ՄՏՄ N 1624
«10» 07 2020թ.

ՀՀ Լոռու մարզ,
Ալավերդի համայնքի ղեկավար
պարոն Սասուն ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խեչումյան

Ի լրումն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2020 թվականի հունիսի 10-ի N01/11.2/3946-2020 գրության հայտնում ենք, որ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից անշարժ գույքի գրանցումը մերժելու վերաբերյալ պարզաբանում ստանալու և հարցին սահմանված կարգով ընթացք տալու նպատակով Կոմիտեն իր 2020 թվականի հունիսի 8-ի N01/11.2/3873-2020 գրությամբ դիմել էր ՀՀ կադաստրի կոմիտե: ՀՀ կադաստրի կոմիտեն իր 2020 թվականի հունիսի 17-ի NՍԹ/3275-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

Մանրամասն ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 0.01368 հա հողամասից 0.00775 հա հողամասը, համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Ալավերդու քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N1084-Ն որոշման, ընդգրկվել է հատուկ պահպանվող հողերի կազմում:

Ելնելով վերոգրյալից ՀՀ քաղաքաշինության կոմիտեն չեղարկել է 2020 թվականի հունվարի 21-ի N1/փ-8 դրական եզրակացությունը և դրա վերաբերյալ իր 2020 թվականի հուլիսի 8-ի N01/11.2/4958-2020 գրությամբ տեղեկացրել շահագրգիռ մարմիններին:

Հաշվի առնելով ի հայտ եկած հանգամանքներն առաջարկում ենք՝ ներկայացնել նոր հողաշինարարական գործ նշելով հողամասերն ըստ համապատասխան նպատակային նշանակությունների:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

Invalid signature

X

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN NUNE 5714640420

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԼԱՎԵՐԴՈՒ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՀՑ N 1837
«28» 07 2021 Թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

28.07.21թ N 06/11.2/6781

ՀՀ Լոռու մարզ
Ալավերդի համայնքի ղեկավար
պարոն Սասուն ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ
(էլեկտրոնային հասցե՝ alaverdimunicipality@gmal.com)

2021 թվականի հուլիսի 15-ի
N 1149 գրություն

Հարգելի պարոն Խեչումյան

Ձեզ է տրամադրում ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-002-0050-0148 կադաստրային ծածկագրով 0.01368 հա մակերեսով հողամասը, որից 0.00593 հա մակերեսով անտառային նպատակային նշանակության թփուտները և 0.00775 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության պատմական և մշակութային նշանակության հողերն՝ ինքնակամ կառույցն օրինականացնելու և այն որպես տնտեսական խանութ օգտագործելու նպատակով, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Առդիր՝ 2 ֆայլ:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN NUNE 5714640420

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725,
կատարող Ասթինե Հակոբյան

Ձև N3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 235

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և/կամ գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ·կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 06-002-0050-0148 ծածկագրով 0,01368 հա մակերեսով հողամասը, որից 0.00593 հա մակերեսով անտառային նպատակային նշանակության թփուտները և 0.00775 հա մակերեսով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության պատմական և մշակութային նշանակության հողերը	ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 06-002-0050-0148 ծածկագրով 0,01368 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Ալավերդի համայնքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «28» «հուլիսի» 2021թ.